



ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ	3
2. ՀՆԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	8
3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	10
4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	13
5. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	15
6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	19
7. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ	21
8. ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ	24
9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԳՆԵՐ	27
10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԱՊՀ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ	30

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ


ՀՆԱ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Համախառն ներքին արդյունք, մլրդ դրամ	3149.3	3568.2	3141.7	3460.2	3777.9	4000.7	4272.9
Համախառն ներքին արդյունք, մլն ԱՄՆ դոլար	9206.3	11662.0	8648.0	9260.3	10142.1	9958.0	10431.1
ՀՆԱ մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	2853.3	3606.1	2666.1	2844.0	3363.2	3293.0	3452.0
ՀՆԱ մեկ շնչի հաշվով, PPP ԱՄՆ դոլար*	5303.4	5768.8	4967.2	5117.3	5443.5	5921.9	6190.7
ՀՆԱ ինդեքս-դեֆլյատոր, %	104.2	105.9	102.6	107.8	104.3	98.8	103.2

2013 թվականի ՀՆԱ համադրելի գներով գերազանցեց 2008 թվականի ՀՆԱ 1.9%-ով

* IMF WEO տվյալների բազա, 2012 և 2013թ. ցուցանիշները գնահատված են


ՀՆԱ ԻՐԱԿԱՆ ԱՃ, %



2013 թվականի ՀՆԱ աճը կազմեց 3.5%: Այն զիջում է 2013թ. հոկտեմբերին ԱՄՀ կողմից Հայաստանի համար տրված գնահատմանը, որը կազմում էր 4.6%: Այն զիջում է նաև 2013թ. պետական բյուջեի հիմքում դրված 6.2% ծրագրային ցուցանիշին և 2014թ. պետական բյուջեով 2013թ. աճի 4.1% գնահատականին:

2013 թվականի ՀՆԱ աճի փաստացի ցուցանիշը զիջեց ինչպես Կառավարության, այնպես էլ միջազգային կառույցների գնահատումներին


ՀՆԱ ԵՎ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՃ, 2013Թ. %



2013թ. համար գնահատված 4.1% աճի սցենարը չի իրականացվել շինարարության և զուտ հարկերի մասով, երբ արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների (ներառյալ՝ առևտուրը) մասով ավելացված արժեքներն աճել են գնահատվածից արագ: Հաշվարկները ցույց են տալիս, որ եթե վերջիններիս փաստաց աճի պահպանման դեպքում շինարարությունը նվազեր ծրագրված տեմպով (-4.5%) 2013թ., ՀՆԱ աճը կկազմեր 4.3%, իսկ եթե պահպաներ 2012թ. մակարդակը, ապա՝ 4.8%:

Շինարարության նույնիսկ ծրագրված նվազման դեպքում ՀՆԱ աճը կարող էր գերազանցել ծրագրված մակարդակը

ՀՆԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԹ, %



Համաշխարհային ճգնաժամն իր բացասական ազդեցություններով հանդերձ հրահրեց տնտեսության կառուցվածքային փոփոխություններ և աճի աղբյուրների դիվերսիֆիկացիա: Աճի աղբյուրները տնտեսության ոչ արտահանելի հատվածից տեղափոխվեցին արտահանելի հատվածներ, ստեղծելով հետագա աճի գեներացման առավել կայուն հիմքեր:

2013 թվականին շարունակվեց ՀՆԱ կառուցվածքային տեղաշարժն ի օգուտ արտահանելի հատվածի

2009թ.-ից ի հայտ եկած ՀՆԱ կառուցվածքային փոփոխությունների միտումները շարունակվեցին նաև 2013թ.: Այսպես, արդյունաբերության տեսակարար կշիռը 2008թ. համեմատ աճել է 3.9, գյուղատնտեսությանը՝ 3.0, իսկ ծառայություններինը՝ 6.1 տոկոսային կետով: Այդ աճը զուգակցվել է շինարարության տեսակարար կշռի կրճատմամբ (-14.8 տոկոսային կետ):

Ճյուղերի ծավալների և ավելացված արժեքների աճերի համադրումները ցույց են տալիս, որ 2008-2009թթ. հետո այստեղ ևս առկա են միտումների որոշակի փոփոխություններ:

Այսպես. 2007-2008թթ. արդյունաբերության ավելացված արժեքի աճը գերազանցում էր ծավալի աճին, մինչդեռ 2010թ.-ից նկատվեց հակառակ միտումը՝ առավել խորանալով 2012-2013թթ.: Գյուղատնտեսությունում 2011 թ.-ից սկսած այդ մեծությունները մոտենում են: Շինարարությունում հստակ վարքագծային միտումներ չեն արձանագրվում: Առևտրում 2011-2012թթ. նկատվում էր ավելացված արժեքի աճի ավելի արագ տեմպ առևտրի շրջառության ծավալի աճի համեմատ, իսկ 2013թ.՝ ընդհակառակը: Ծառայություններում, չհաշված ճգնաժամի տարիները և 2012թ., ավելացված արժեքն աճում է ծավալից արագ:

ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԱՃ, % ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆԿԱՏՄԱՄԲ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Արդյունաբերություն	2.8	2.2	-6.9	9.2	13.6	6.3	5.4
Գյուղատնտեսություն	10.4	3.3	6.0	-16.0	14.0	9.5	7.2
Շինարարություն	18.2	11.3	-41.6	3.3	-12.2	4.8	-10.8
Առևտուր	8.8	8.0	-4.8	2.9	4.8	4.7	1.0
Ծառայություններ	16.4	3.5	-3.1	5.4	6.7	7.8	8.4
ՖՄԱԶԾ	53.4	9.1	-10.2	19.0	35.3	15.6	14.8
Զուտ հարկեր	35.9	17.1	-22.5	13.4	3.8	9.9	2.8

2013թ. արդյունաբերությունում ավելացված արժեքի աճը հետ է մնում ծավալի աճից

ԹՈՂԱՐԿՄԱՆ ԾԱՎԱԼԻ ԱՃ, % ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆԿԱՏՄԱՄԲ


	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Արդյունաբերական արտադրանք	2.6	1.7	-7.6	9.7	13.9	8.8	6.8
Գյուղատնտեսական արտադրանք	9.6	1.3	-0.5	-13.6	13.9	9.5	7.1
Շինարարություն	19.7	3.1	-37.4	-2.5	-8.9	-2.6	-8.1
Առևտրի շրջանառություն	9.3	7.9	-6.6	5.6	3.3	3.7	1.2
Ծառայություններ	15.5	13.8	0.4	3.5	5.4	10.8	3.6

Ավելացված արժեքի և ծավալի աճի շեղումները պայմանավորված են համախառն թողարկման կառուցվածքով:

Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին նկատվում է համախառն թողարկման մեջ միջանկյալ սպառման տեսակարար կշռի աճ՝ հիմնականում արդյունաբերության և շինարարության ճյուղերում միջանկյալ սպառման հաշվին: Շարունակվելու դեպքում երևույթը մտահոգիչ կարող է լինել ճյուղում շահութաբերության և մրցունակության անկման տեսանկյունից:

Վերջին տարիներին նկատվում է համախառն թողարկման մեջ միջանկյալ սպառման տեսակարար կշռի աճ


ՀԱՄԱԽԱՌՆ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



Ճգնաժամից հետո փոխվել են նաև աճի աղբյուրները. եթե մինչև 2009թ. ՀՆԱ աճին առավելապես նպաստել է շինարարությունը, ապա ներկայումս աճն ապահովվում է ծառայությունների, արդյունաբերության և գյուղատնտեսության հաշվին: Այսպես, 2013թ. ծառայությունների նպաստման չափը ՀՆԱ աճին կազմել է 2.5, գյուղատնտեսությանը՝ 1.4, իսկ արդյունաբերությանը՝ 0.9 տոկոսային կետ:

2013թ. ՀՆԱ աճի վրա զսպող ազդեցություն ունեցան շինարարությունը, փոխադրումները և պահեստային տնտեսությունը, ինչպես նաև էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը

ՀՆԱ ԱՃԻՆ ՆՊԱՍՏՄԱՆ ՉԱՓ, ՏՈԿՈՍԱՅԻՆ ԿԵՏ




- A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
- B. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
- C. Մշակող արդյունաբերություն
- D. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում
- E. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
- F. Շինարարություն
- G. Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում
- H. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
- I. Կացության և հանրային սննդի կազմակերպում
- J. Տեղեկատվություն և կապ
- K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն
- L-T. Այլ ծառայություններ

2013թ. նկատվել է ՀՆԱ աճի եռամսյակային միտումների փոփոխություն: Ի տարբերություն նախորդ տարիների, երբ ՀՆԱ ամենամեծ աճ գրանցվում էր հիմնականում երրորդ եռամսյակում (2010թ.՝ երկրորդում) 2013թ. ամենամեծ աճ գրանցվել է առաջին եռամսյակում:

2013թ. նկատվել է ՀՆԱ աճի եռամսյակային վարքագծի միտումների փոփոխություն՝ ի օգուտ առաջին եռամսյակի


2007-2013ԹԹ. ՀՆԱ ԱՃ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ, %



2013թ. տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 3.5%: Ամենաբարձր տնտեսական ակտիվությունը ըստ 2013թ. եռամսյակների ևս արձանագրվել է առաջին եռամսյակում՝ տարբերվելով նախորդ տարիների եռամսյակային վարքագծից:

Տնտեսական ակտիվությունը տարեկան կըտրվածքով խիստ նվազել է՝ չնայած առաջին եռամսյակում վերջին տարիների ամենաբարձր ցուցանիշին

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ, ԱՃՈՂԱԿԱՆ, %




Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (PPP) ցուցանիշով Հայաստանը տարածաշրջանի երկրներից առաջ է միայն Վրաստանից: Այդուհանդերձ, 2007-2013թթ. ընթացքում Վրաստանի ցուցանիշն աճել է 31.9%-ով, երբ Հայաստանինը միայն 16.7%-ով: Ադրբեջանի համանուն ցուցանիշն աճել է 40.2%-ով:

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (PPP) ցուցանիշով Հայաստանը զգալիորեն հետ է մնում Մաքսային Միության երկրներից

ԱՊՀ միջինն աճել է 22.0%-ով: ԱՊՀ երկրների միջինը գերազանցում է Հայաստանի ցուցանիշը 2 անգամ: ԱՊՀ երկրներից Հայաստանը զբաղեցնում է 7-րդ տեղը: Հայաստանի ցուցանիշը զգալիորեն ցածր է նաև Մաքսային միության երկրների ցուցանիշից:


ՄԵԿ ՇՆՉԻՆ ԸՆԿՆՈՂ ՀՆԱ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ, PPP ԱՄՆ ԴՈԼԱՐ (ԸՍՏ ԱՄՇ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ)



2. ՀՆԱ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ՀՆԱ
օգտագործման
կառուցվածքում
շարունակվում է
համախառն
կուտակման
տեսարարար
կշռի նվազումը

ՀՆԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %




ՀՆԱ օգտագործման կառուցվածքում շարունակվում են 2009 թվականից նկատվող բացասական միտումները: Շարունակվում է համախառն կուտակման տեսարարար կշռի նվազումը: Մինչդեռ հատկապես հիմնական միջոցների համախառն կուտակումն է հիմք հանդիսանում հետագա տարիներին ՀՆԱ արտադրության համար: Այսպես, 2008թ. համեմատ համախառն կուտակման տեսարարար կշիռը կրճատվել է գրեթե 2 անգամ (կամ 19.2 տոկոսային կետով): Զուգահեռ շարունակվում է վերջնական սպառման ծախսերի տեսարարար կշռի աճը, ինչը հանգեցրեց նրան, որ 2012 և 2013թթ. այն գերազանցեց ՀՆԱ-ն (2008թ. համեմատ տեսարարար կշիռն աճել է 21.9 տոկոսային կետով):

Վերոնշյալ միտումների պահպանումը սրում է արտաքին աշխարհից կախվածության խորացման ռիսկերը:

Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի աճի տեմպը ամենացածրն է հետճգնաժամային ժամանակահատվածում

ՀՆԱ ԵՎ ՀՆԱ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԻԵՐԻ ԱՃ, %



Համախառն կուտակման տեսարարար կշռի նվազմանը զուգահեռ նվազում է նաև ծավալը: Բացառությամբ 2010 և 2012թթ. արձանագրված աննշան (0.5%) աճի՝ պահպանվում է 2009թ.-ից (30.9%) սկսած անկումը:


Դանդաղում են տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի աճի տեմպերը (2012թ. աճը կազմել է 9.1%, իսկ 2013թ.՝ 2.0%), իսկ 2013թ. երրորդ եռամսյակում դրանք նույնիսկ նվազել են 0.1%-ով:

Հատկապես սպառման սահմանային բարձր հակման (0.8-0.9) պայմաններում սպառման տեմպերի դանդաղումը զսպող գործոն է հանդիսանում ՀՆԱ աճի համար:

2013թ. հիմնական միջոցների համախառն կուտակումը շարունակեց նվազել՝ պահպանելով նաև եռամսյակային վարքագծի ձևավորված միտումները: Իսկ նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունը 2013թ. կազմեց 32.4 մլրդ դրամ 2012թ. 73.7 մլրդ դրամի դիմաց:

2013թ. նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունը 2.3 անգամ ցածր է 2012թ. ցուցանիշից

ՀԱՄԱԽԱՌՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ, ՄԼՐԴ ԴՐԱՄ



2014 թվականի ՀՆԱ կանխատեսում

- ❖ 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմքում դրված մակրոտնտեսական շրջանակը նախատեսում է ՀՆԱ 6.3% աճ
- ❖ 2014թ. պետական բյուջեի հիմքում դրված է ՀՆԱ 5.2% աճ
- ❖ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից 2014թ. ապրիլի տվյալներով ՀՆԱ կանխատեսված աճը կազմում է 4.3%
- ❖ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից կանխատեսման արդյունքները հանգում են ՀՆԱ միջինում 4.7 % աճի, մասնավորապես
 - 4.8%՝ տնտեսական գործունեության տեսակների ավելացված արժեքների աճերի գնահատմամբ,
 - 4.5%՝ ՀՆԱ սպառման բաղադրիչների աճերի գնահատմամբ


3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ, 2013Թ.

	Արտադրանքի ծավալ, մլրդ. դրամ	Աճ 2012թ. նկատմամբ, %	Կառուցվածք, %	Նպաստման չափ, տոկոսային կետ
Արդյունաբերություն	1240.6	6.8	100.0	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	196.7	8.1	15.9	1.4
Մշակող արդյունաբերություն	775.6	7.7	62.5	4.8
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	250.5	2.6	20.2	0.5
Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	17.8	7.6	1.4	0.1

Արդյունաբերության աճը հիմնված է հիմնականում մշակող ճյուղերի վրա

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



2009թ. 85%-ի դիմաց 2013թ. արդյունաբերությունում ստեղծված ավելացված արժեքի շուրջ 90%-ը (17.4 ընդամենից 15.5) ստեղծվել է 7 գործունեության տեսակներում

Արդյունաբերության կառուցվածքում էական փոփոխություններ չեն արձանագրվել: Մշակող արդյունաբերությունը կազմում է արդյունաբերության 66.1% և արդյունաբերության աճին ունի ամենամեծ նպաստման չափը (4.8 տոկոսային կետ): Վերջին տարիներին աճել է էլեկտաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման տեսակարար կշիռը և նվազել հանքագործական արդյունաբերության տեսակարար կշիռը, ինչը հիմնականում պայմանավորված է նշված գործունեության տեսակներում գների փոփոխությամբ:

ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌ ՀՆԱՌԻՄ, %


	2009	2010	2011	2012	2013
Մետաղական հանքաքարի արդյունահանում	1.5	2.4	2.6	2.9	2.3
Սննդամթերքի արտադրություն	3.3	3.7	4.7	4.2	5.1
Խմիչքների արտադրություն	1.0	1.2	1.2	1.4	1.6
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	0.2	0.3	0.2	0.3	0.5
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	0.8	0.7	0.7	0.6	0.6
Հիմնային մետաղների արտադրություն	1.6	2.0	2.3	2.0	0.9
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	2.9	2.8	3.5	4.0	4.5
Ընդամենը արդյունաբերություն	13.4	15.5	17.1	17.2	17.4

ՀՆԱ-ում արդյունաբերության ճյուղերից ամենամեծ կշիռ ունի սննդամթերքի արտադրությունը

2013 թվականի I, II և III եռամսյակներում արդյունաբերությունում նկատվում է միջանկյալ սպառման տեսակարար կշռի աճ համախառն թողարկման մեջ, ինչի արդյունքում ճյուղի ավելացված արժեքի աճի տեմպը I և II եռամսյակներում էականորեն հետ է մնում ծավալների աճի տեմպից: Չնայած երրորդ եռամսյակում միջանկյալ սպառման տեսակարար կշռի աճին, արդյունաբերության ավելացված արժեքի աճի տեմպը գերազանցել է ծավալի աճի տեմպին: Իսկ IV եռամսյակում նկատվում է հակառակ միտումը:


2012-2013թթ. արդյունաբերության ավելացված արժեքի աճի տեմպը հետ է մնում ծավալի աճի տեմպից

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ԵՎ ԾԱՎԱԼԻ ԱՃ, %



ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԱՌՆ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %

2010թ.-ից արդյունաբերության համախառն թողարկման կառուցվածքում նկատվում է միջանկյալ սպառման տեսակարար կշռի ավելացում



Միջանկյալ սպառման տեսակարար կշռի ավելացումը բնորոշ է հանքագործական և մշակող արդյունաբերությանը (մնացած երկու ճյուղերում նման միտում չի նկատվում): Մասնավորապես, 2012թ. համեմատ հանքագործական արդյունաբերության ավելացված արժեքի տեսակարար կշիռը համախառն թողարկման մեջ նվազել է 8.9 տոկոսային կետով: Դա հիմնականում բացատրվում է մետաղների միջազգային գների հետևաբար և շահույթի նվազմամբ:

Մշակող արդյունաբերությունում ավելացված արժեքի տեսակարար կշիռը համախառն թողարկման մեջ նվազել է 3.1 տոկոսային կետով:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԳ ԵՐԿՆԻՇ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ, 2013Թ.

	Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Պատրաստի արտադրանքի իրացում, մլրդ դրամ	Արտահա- նում, մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ, %	Նպաստման չափը արդյունաբ. աճին, տոկոսային կետ
Արդյունաբերություն	1240.6	1214.4	452.9	37.3	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	196.7	175.3	117.9	67.2	1.4
Մետաղական հանքաքարի արդյունահանում	191.3	169.4	116.2	68.6	1.5
Հանքագործական արդյունաբ. և բացահանքերի շահ. այլ ճյուղեր	5.3	5.9	1.7	28.4	0.0
Մշակող արդյունաբերություն	775.6	770.8	318.6	41.3	4.8
Սննդամթերքի արտադրություն	274.5	263.6	15.3	5.8	0.7
Խմիչքների արտադրություն	125.7	124.8	80.2	64.3	1.6
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	38.3	41.0	27.8	67.8	0.5
Հագուստի արտադրություն	5.9	6.2	2.2	35.3	0.0
Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	11.5	11.6	0.1	0.5	0.2
Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում	14.2	14.3	0.1	1.0	0.0
Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադր.	7.5	8.3	1.4	16.8	0.0
Դեղագործական արտադրանքի արտադրություն	5.3	5.0	2.7	54.8	0.1
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	20.6	21.3	2.2	10.5	-0.1
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	54.0	50.9	12.4	24.4	0.3
Հիմնային մետաղների արտադրություն	159.4	164.7	145.8	88.5	1.3
Պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն	13.4	13.1	1.3	9.8	0.1
Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարք. Արտադրություն	5.9	6.3	3.7	57.9	0.0
Էլեկտրական սարքավորանքի արտադրություն	5.6	5.9	2.5	42.4	0.0
Մշակող արդյունաբերության այլ ճյուղեր	33.8	33.9	20.9	61.6	0.1
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	250.5	250.5	16.4	6.6	0.5
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառ. և վերամշակում	17.8	17.8	-	-	0.1

2013թ. իրացվել է արտադրված արդյունաբերական արտադրանքի 97.9%-ը, որի 37.3%-ն ուղղվել է արտահանման: Մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանումը կազմել է իրացման 41.3%-ը:


Արդյունաբերության աճին հատկապես նպաստել են խմիչքների արտադրությունը, մետաղական հանքաքարի արդյունահանումը, հիմնային մետաղների արտադրությունը, սննդամթերքի արտադրությունը և ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը: Նշված գործունեության տեսակներն ունեն ընդգծված արտահանման ուղղվածություն (բացի սննդամթերքի արտադրությունից):

Արդյունաբերական արտադրանքի արտահանման 27.3%-ը է բաժին ընկնում ԱՊՀ երկրներին:

2013թ. արտահանվել է արդյունաբերական արտադրանքի 37.3%-ը, 2012 թ. 38.3% դիմաց

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



2013թ. ծավալի աճ է արձանագրվել ծառայությունների գրեթե բոլոր տեսակներում (բացառությամբ փոխադրումների, վարչական և օժանդակ ծառայությունների ու կրթության)

2013թ. ծավալի աճ է արձանագրվել ծառայությունների գրեթե բոլոր տեսակներում: Ծառայությունների ծավալը կազմել է 1022.8 մլրդ դրամ, աճը՝ 3.6%: Ծառայությունների կառուցվածքում շարունակում են գերակշռել ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, տեղեկատվությունը և կապը, տրանսպորտն ու կազմակերպության և հանրային սննդի կազմակերպումը՝ ընդամենի 69.9% (2012թ.՝ 70.9 տոկոս):

2012թ. համեմատությամբ ծավալների նվազում է գրանցվել տրանսպորտային ծառայությունների՝ -14.9% և վարչարարական և օժանդակ գործունեություն գծով՝ -11.2%:

Բեռնափոխանդրումների ծավալը կազմել է 12.3 մլն տոննա (աճը՝ 1.9%), որից երկաթուղայինը՝ 3.3 մլն տոննա (նվազումը՝ 5.3%), ավտոմոբիլայինը՝ 7.3 մլն տոննա (աճը՝ 7.0%), օդայինը 0.01 մլն տոննա (նվազումը՝ 15.4%), խողովակաշարայինը՝ 1.7 մլն տոննա (նվազումը՝ 3.6%):

Ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 240.8 մլն մարդ (նվազումը՝ 3.1%), որից երկաթուղայինը՝ 0.4 մլն մարդ (նվազումը՝ 24.7%), ավտոմոբիլայինը՝ 217.9 մլն մարդ (նվազումը՝ 3.4%), օդայինը 1.8 մլն մարդ (նվազումը՝ 0.3%), էլեկտրատրանսպորտինը՝ 20.7 մլն մարդ (աճը՝ 0.5%):

Օդային տրանսպորտի գործունեության ծավալների նվազումը մեծապես պայմանավորվեց «Արմավիա» ՓԲԸ 2012թ. սնանկացմանը հաջորդած ժամանակահատվածում օդային փոխադրումների շուկայում առաջացած կոնյուկտուրային փոփոխություններով:

Երկաթուղով բեռնափոխադրումների նվազումը հիմնականում պայմանավորված է հանքային շինարարական նյութերի 50.1%, ցեմենտի 12.8%, սև մետաղների 10.7% և նավթ ու նավթամթերքի 8.4% նվազմամբ:

Վարչական և օժանդակ ծառայություններում տարվա սկզբից նվազում են գրեթե բոլոր հատվածները, մասնավորապես (առաջին երկու խոշորների մասով) ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող ծառայությունների ծավալը նվազել է 14.4%-ով, զբոսաշրջային գործակալությունների գործունեությունը՝ 16.5%-ով:

ՀՆԱ աճին հատկապես նպաստել են ֆինանսական ծառայությունները, տեղեկատվություն և կապը, անշարժ գույքի հետ կապված գործունեությունը, կազմակերպության և հանրային սնունդը

ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ԾԱՎԱԼ ԵՎ ԱՃ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆԿԱՏՄԱՄԲ

2010-2012 թթ. անկումներից հետո աճ է արձանագրվել ՏՀՏ արտադրության ոլորտում

	2009	2010	2011	2012	2013
ՏՀՏ ոլորտի ծավալ, մլրդ դրամ					
ՏՀՏ, այդ թվում	192.5	193.8	197.2	213.9	234.4
արտադրություն	1.9	2.7	1.7	1.9	2.3
առևտուր	11.2	10.3	16.0	22.0	29.2
ծառայություններ, որից՝	179.4	180.8	179.4	190.0	202.9
հեռահաղորդակցություն	159.0	162.3	158.7	165.2	173.7
ՏՀՏ ոլորտի աճ, %					
ՏՀՏ, այդ թվում	3.1	1.3	1.4	6.8	11.7
արտադրություն	15.2	-53.3	-4.5	-3.1	18.7
առևտուր	109.6	0.4	2.9	31.4	25.7
ծառայություններ, որից՝	0.1	3.0	1.4	4.7	10.0
հեռահաղորդակցություն	-1.1	3.7	0.0	3.1	10.0

2010-2012թթ. որոշակի դանդաղումից հետո շարունակում է արագանալ ՏՀՏ ոլորտի աճը: Եռամյա անկումներից հետո աճ է արձանագրվել նաև ՏՀՏ արտադրության ոլորտում՝ 18.7%:

ՏՀՏ ոլորտի հիմական մասնաբաժինը շարունակում է կազմել հեռահաղորդակցությունը՝ 74.1%, որի աճը կազմել է 10.0%:

Հեռահաղորդակցության ծառայությունների ծավալի աճը պայմանավորված է շուկայում ծառայությունների նոր օպերատորի մուտքի հետ և արդեն գործող օպերատորների կողմից մատուցվող ծառայությունների փաթեթի շարունակական ընդլայնման հետ:

2013թ. հանրապետություն են ժամանել 957.2 հազար զբոսաշրջիկ, աճը՝ 13.5%: Ժամանողների աճի տեմպը գերազանցում է մեկնողների աճի տեմպին՝ ի տարբերություն 2012թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Զբոսաշրջիկների թվաքանակ, հազար մարդ							
Ժամանողներ	510.3	558.4	575.3	684.0	757.9	843.3	957.2
Մեկնողներ	467.6	515.5	526.2	640.0	715.0	806.5	906.2
Զբոսաշրջիկների թվաքանակի աճ, %							
Ժամանողներ	33.5	9.4	3.0	18.9	10.3	11.3	13.5
Մեկնողներ	38.7	10.3	2.1	21.6	10.2	12.8	12.3

2013թ. հանրապետություն են ժամանել 957.2 հազար զբոսաշրջիկ, աճը՝ 13.5%: Զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 906.2 հազար մարդ, աճը՝ 12.3%:

ՀՀ այցելած զբոսաշրջիկներից 15.5%-ը տեղավորվել են հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում՝ նախորդ տարվա 16.2%-ի դիմաց:

Հյուրանոցային տնտեսություններում հանգրվանած զբոսաշրջիկների 27.8% բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 36.3%՝ ԵՄ երկրներին և 35.9%՝ այլ երկրներին:

5. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԾԱՎԱԼ ԵՎ ԱՃ ՆԱԽՈՐԴ ՏԱՐԿԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ
ՆԿԱՏՄԱՄԲ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Արտաքին առևտրի ծավալ, մլն ԱՄՆ դոլար							
Ապրանքների արտահանում	1152.3	1057.2	710.2	1041.1	1334.3	1380.2	1480.0
Ապրանքների ներմուծում	3267.8	4426.1	3321.1	3749.0	4145.3	4261.2	4476.8
Առևտրաշրջանառություն	4420.1	5483.3	4031.3	4790.0	5479.7	5641.4	5956.8
Առևտրի հաշվեկշիռ	-2115.5	-3369.0	-2611.0	-2707.9	-2811.0	-2881.0	-2996.8
Արտաքին առևտրի աճ, %							
Ապրանքների արտահանում	17.0	-8.3	-32.8	46.6	28.2	3.4	7.2
Ապրանքների ներմուծում	49.1	35.4	-25.0	12.9	10.6	2.8	5.1
Առևտրաշրջանառություն	39.1	24.1	-26.5	18.8	14.4	3.0	5.6

2010թ.-ից արտահանումն աճում է ներմուծումից առաջանցիկ տեմպերով


Չնայած այն հանգամանքին, որ վերջին չորս տարիներին արտահանումն աճում է ներմուծումից առաջանցիկ տեմպերով, սակայն խնդիր է մնում դրա կայունության ապահովումը: Իսկ ելնելով ներքին սպառման աճի դանդաղման միտումներից և մեր զարգացման մոդելի մեջ արտահանման առանցքային նշանակությունից՝ արտաքին իրացման շուկաների նշանակությունը ավելի քան մեծանում է:

Որպեսզի տեղական արտահանողները զարգացնեն կամ զոնե պահպանեն արտահանման պոտենցիալը, պետք է ունենան խթանող պայմաններ՝ նպաստող փոխարժեքի քաղաքականության, երկարաժամկետ/մատչելի ֆինանսական ռեսուրսների հասանելիության առումներով:

2013թ. ապրիլից սկսած նկատվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժևորում: Ապրիլից դեկտեմբեր ամիսներին այն կազմել է 2.6%, իսկ 2012թ. հունվարի համեմատ դրամն արժևորվել է 5.0%-ով, ինչը նպաստավոր պայմանների չի ստեղծում արտահանման կայուն աճի համար:

2013թ. ապրիլից նկատվում է դրամի արժևորման միտում



ԱՄՆ ԴՈԼԱՐ/ՀՀ ԴՐԱՄ ՓՈԽԱՐԺԵՔ



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ



Արտահանման կառուցվածքում 4 հիմնական ապրանքախմբերի տեսակարար կշիռը կազմում է 82.1%


Միջճգնաժամային կառուցվածքի համեմատ արտահանման ապրանքային կառուցվածքը ենթարկվել է մի շարք փոփոխությունների: Արտահանման կառուցվածքում շարունակում են գերակշռել հետևյալ 4 ապրանքախմբերը՝ «հանքահումքային արտադրանք» (աճ՝ 1.2%), «պատրաստի սննդի արտադրանք» (աճ՝ 21.5%), «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (նվազում՝ 9.7%), «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (աճ՝ 8.7%): Նրանց գումարային տեսակարար կշիռը կազմում է ընդհանուր արտահանման 82.1% 2007թ. 79.6%-ի դիմաց (2012թ.՝ 85.0%): Սակայն փոխվել է նշված ապրանքախմբերի հարաբերակցությունը, 2007թ. համեմատ «պատրաստի սննդի արտադրանք» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի տեսակարար կշիռներն աճել են 8.4 և 12.5 տոկոսային կետով համապատասխանաբար, իսկ «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի տեսակարար կշիռներն նվազել են 13.0 և 5.4 տոկոսային կետով համապատասխանաբար:

Ներմուծման կառուցվածքում 7 հիմնական ապրանքախմբերի տեսակարար կշիռը կազմել է 72.5%


Ի տարբերություն արտահանման ապրանքային կառուցվածքի՝ ներմուծման կառուցվածքում էական փոփոխություններ չեն գրանցվել: Ներմուծման կառուցվածքում գերակշռել են հետևյալ 7 ապրանքախմբերը, «հանքահումքային արտադրանք» (աճ՝ 4.6%), «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (նվազում՝ 3.1%), «պատրաստի սննդի արտադրանք» (աճ՝ 11.4%), «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» (աճ՝ 10.3%), «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» (աճ՝ 1.1%), «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (նվազում՝ 4.0%) և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (աճ՝ 64.9%), որոնց տեսակարար կշիռը կազմել է ընդհանուր ներմուծման 72.5% (2012թ.՝ 71.3%):

Արտահանման կառուցվածքում նվազել է ԵՄ տեսակարար կշիռը

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ. %



ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԸՍՏ ԱՌԵՎՏՈՒՐ ԱՆՈՂ ԵՐԿՐԻ. %



■ ԱՊՀ երկրներ ■ ԵՄ երկրներ ■ Այլ երկրներ


Ըստ երկրների խմբերի արտահանման կառուցվածքը հետևյալն է՝ ԵՄ երկրները՝ 33.4%, ԱՊՀ երկրները՝ 27.1%, այլ երկրները՝ 39.5%: Ընդ որում նախորդ տարվա համեմատությամբ 3.5 տոկոսով նվազել է ԵՄ երկրներ արտահանման ծավալները, իսկ ԱՊՀ և այլ երկրներ արտահանման աճը կազմել է համապատասխանաբար 19.1% և 10.1%, ինչն էլ հանգեցրել է ԱՊՀ և այլ երկրների տեսակարար կշռի ավելացման:

ԱՊՀ արտահանման 87.3% բաժին է ընկնում Մաքսային միության երկրներին, իսկ 83.4%-ը Ռուսաստանին:

Արտահանման գծով հիմնական գործընկերներն են՝ Ռուսաստանը, Բուլղարիան, Բելգիան, Իրանը, Գերմանիան:

2012թ. 2007թ. համեմատ արտահանման կառուցվածքում 20.5 տոկոսային կետով նվազել է մշակված ապրանքների տեսակարար կշիռը

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԸՍՏ ՄՇԱԿՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ, % (ԸՍՏ UNCTAD ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶԱՅԻ)



■ Առաջնային-հումքային ապրանքներ, թանկարժեք քարեր
 ■ Մշակված արտադրանք
 ■ Աշխատատար և ռեսուրսատար ապրանքներ
 ■ Ցածր որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրված ապրանքներ
 ■ Միջին որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրված ապրանքներ
 ■ Բարձր որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրված ապրանքներ


UNCTAD տվյալների բազայի համաձայն 2012թ. ՀՀ արտահանման 75.6% կազմել են առաջնային ապրանքները և միայն 24.4% մշակված արտադրանքներ: 2007թ. համեմատ մշակված արտադրանքի տեսակարար կշիռը նվազել է 20.5 տոկոսային կետով, ընդ որում նվազել է նաև մշակված արտադրանքների արտահանման ծավալը 31.4%-ով: Նվազել են մշակված արտադրանքների բոլոր խմբերի արտահանման ծավալները, բացառությամբ բարձր որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրվածների ծավալը, սակայն հաշվի առնելով առաջնային ապրանքների ավելի արագ աճը, նրանց տեսակարար կշիռն ևս նվազել է 1.8 տոկոսային կետով:

2012թ. բարձր որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրված ապրանքների տեսակարար կշիռը մշակված ապրանքների արտահանման կառուցվածքում կազմել է 31.7%՝ 2007թ.-ի 21.1%-ի դիմաց

ԱՊՀ երկրներ արտահանման մեջ առաջնային ապրանքների տեսակարար կշիռը կազմում է 15.5%, ԵՄ երկրներ արտահանման մեջ՝ 35.2%: Սակայն ԱՊՀ երկրներ հիմնականում արտահանվում է բարձր և միջին որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրված ապրանքներ, իսկ ԵՄ երկրներ՝ ցածր որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրված ապրանքներ:

ՄՇԱԿՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ

ՄՇԱԿՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ , %




- Բարձր որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրված ապրանքներ
- Միջին որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրված ապրանքներ
- Ցածր որակավորված աշխատուժով և տեխնոլոգիայով արտադրված ապրանքներ
- Աշխատատար և ռեսուրսատար ապրանքներ

2013թ. փոքր ինչ կրճատվել է ՀՆԱ նկատմամբ արտահանման և ներմուծման հարաբերությունների միջև տարբերությունը

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

ՀՆԱ ՆԿԱՏՄԱՄԲ, %



6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Օտարերկրյա ներդրումները 2013թ կազմել են 597.4 մլն ԱՄՆ դոլար, կամ ՀՆԱ ընդամենը 5.7%-ը: Պատմականորեն օտարերկրյա ներդրումների ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2008թ կազմելով՝ 1257.6 մլն ԱՄՆ դոլար, կամ ՀՆԱ 10.8%-ը:


2013թ. արձանագրվեց օտարերկրյա ուղղակի ներդրումների՝ վերջին տարիների ամենախոր անկումը

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Օտարերկրյա ներդրումների ծավալ, մլն դոլար							
Օտարերկրյա ներդրումներ	845.4	1257.6	935.5	702.7	816.3	751.8	597.4
այդ թվում՝ ուղղակի	582.3	1000.9	732.1	483.0	631.4	567.4	271.2
Օտարերկրյա ներդրումների աճ, %							
Օտարերկրյա ներդրումներ	34.6	48.8	-25.6	-24.9	16.2	-7.9	-20.5
այդ թվում՝ ուղղակի	34.0	71.9	-26.9	-34.0	30.7	-10.1	-52.2

2008թ.-ից նկատվում է օտարերկրյա ներդրումների ծավալների անկում: Օտարերկրյա ներդրումների կառուցվածքում շարունակում են առաջատար դիրքեր զբաղեցնել հեռահաղորդակցությունը, հանքագործական արդյունաբերությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունը: Վերջին տարիներին հարաբերականորեն կայուն են նաև անշարժ գույքի հետ կապված գործունեություն և խմիչքների արտադրություն իրականացվող օտարերկրյա ներդրումները: Նախորդ տարվա համեմատ 7 անգամ աճել են օդային տրանսպորտում կատարված ներդրումները (ուղղակիները՝ ընդամենը 1.4 անգամ):

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, 2013Թ, %



Տեղեկատվություն և կապ ուղորտում 2002-2008թթ. ընդհանուր ներդրումների ծավալը կազմել է 953.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2009-2013 թթ՝ 1058.2 մլն ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ներդրումների 27.8%-ը:

Օտարերկրյա ներդրումների մյուս ամենամեծ հոսքը վերջին տարիներին նկատվում էր էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ուղորտում: 2002-2008թթ. ներդրումները կազմել են 939.7 մլն ԱՄՆ դոլար: 2009-2013թթ. այն կազմել է 629.6 մլն ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ներդրումների 16.5%-ը:

2009-2013թթ. օտարերկրյա ներդրումների ավելի քան 60 տոկոսը կլանվել է ենթակառուցվածքների կողմից


2002-2008թթ. համեմատ 2009-2013թթ. գրեթե կրկնակի ավելացել է ցամաքային տրանսպորտի և փոխադրում խողովակներով ոլորտում ներդրումների ծավալը՝ կազմելով 292.8 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ներդրումների 7.7%-ը):

Օդային տրանսպորտի ոլորտում ներդրումների ծավալները 2002-2008թթ. կազմել են 191.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2009-2013թթ.՝ 222.8 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ներդրումների 5.9%-ը):

Հանքագործական արդյունաբերության ոլորտում եթե 2002-2008թթ. ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է մոտ 350.0 մլն ԱՄՆ դոլար, ապա վերջին 5 տարիներին՝ 2009-2013թթ. ներդրումները կազմել են 525.7 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր ներդրումների 13.8%-ը)՝ բացառությամբ 2013թ. ցուցաբերելով աճի միտում:


Ներդրումներ իրականացնող հիմնական երկրների ցանկը կայուն է. Արգենտինա, Ֆրանսիա, Ռուսաստան, Կանադա

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ, 2013Թ, %



Հայաստանը դասվում է միջինից բարձր գրավչության և ցածր պոտենցիալով սպասումներ ձևավորող երկիր

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀՆԱ ՆԿԱՏՄԱՄԲ, %



UNCTAD կողմից հրապարակվող Համաշխարհային ներդրումային զեկույցում երկրները գնահատվում են ըստ ՕՈՒՆ գրավչության և ՕՈՒՆ պոտենցիալի ինդեքսների: Երկրները խմբավորվում են 4 դասերում՝ ըստ ինդեքսների գծով սպասումների մակարդակի: Հայաստանը դասվում է միջինից բարձր գրավչության և ցածր պոտենցիալով սպասումներ ձևավորող երկրների խմբին: Ադրբեջանը դասվել է գրավչության միջինից ցածր և պոտենցիալի միջինից բարձր սպասումներով երկրների խմբին, իսկ Վրաստանը՝ միջինից բարձր գրավչության և պոտենցիալով սպասումներ ձևավորող երկրների խմբին:

7. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ, ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Եկամուտներ	588.0	785.4	690.0	780.4	880.9	946.2	1071.4
Ծախսեր	634.7	810.6	929.1	954.3	986.5	1006.1	1142.9
Պակասուրդ	-46.7	-25.2	-239.1	-173.9	-105.7	-59.9	-71.5

Պետական բյուջեի ճշտված պլանն եկամուտների մասով կատարվել է 99.8%

2013թ. պետական բյուջեի եկամուտները կազմել են 1071.4 մլրդ դրամ, ճշտված պլանի կատարողականը կազմել է 99.8%:

2013թ. պետական բյուջեի ճշտված պլանը եկամուտների մասով կազմում է 1073.8 մլրդ դրամ, ինչը գերազանցում է պլանը 4.0%-ով, իսկ նախորդ տարվա կատարողականը՝ 13.5%-ով (անվանական աճ):

Հարկային եկամուտների և պետական տուրքերի մասով 2013թ. մուտքերը կազմել են 1000.9 մլրդ դրամ, ճշտված պլանի կատարողականը կազմել է 100.0%:


Հարկային եկամուտների և պետական տուրքերի մասով 2013թ. ճշտված պլանը գերազանցում է պլանը 0.8%-ով, իսկ 2012թ. կատարողականը՝ 13.9%-ով (անվանական աճ):

Հարկային եկամուտների մասով 2013թ. համար նախատեսված աճը պլանավորված էր ՀՆԱ 6.2% աճի համար, իսկ 100%-ով այն կատարվել է ՀՆԱ 3.5% աճի պայմաններում, ինչը կարող է տեղի ունենալ կամ տնտեսության չհաշվառվող մասի էական կրճատման, կամ կանխավճարների և գերավճարների չարդարացված ծավալներով: Վերջինիս պարագայում սահմանափակվում են կազմակերպությունների ներդրումային հնարավորությունները և վտանգվում ընդլայնված վերարտադրության իրականացումը: Հարկային եկամուտների հավաքագրման նման աճի արդյունքում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը հասավ 23.5%:


Համաշխարհային Բանկի տվյալների համաձայն ՀՀ հարկային եկամուտներ և այլ եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը 2012թ. կազմել է 24.1%, այն դեպքում երբ մեր եկամտային խմբի (միջին ցածր եկամուտներ) միջինը կազմում է 15.6%:

Հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցության ոչ ադեկվատ մեծությունը վտանգում է հաջորդ տարիների տնտեսական ակտիվության ներուժը

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ/ՀՆԱ, %




ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ/ՀՆԱ, %



Բյուջեի եկամուտների կառուցվածքում փոփոխություններ չեն արձանագրվել: Ինչպես և նախորդ տարիներին բյուջեի եկամուտների գերակշիռ մասն ապահովվել է հարկային եկամուտների հաշվին:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



Պետական բյուջեի ճշտված պլանն ծախսերի մասով կատարվել է ընդամենը 90.8%

Պետական բյուջեի ծախսերը կազմել են 1142.9 մլրդ դրամ, ճշտված պլանի կատարողականը՝ 90.8%: Թերակատարումը կազմել է 115.3 մլրդ դրամ, որը կազմում է ՀՆԱ 2.7%: Ընդ որում թերակատարվել են ծախսերի բոլոր բաժինները, բացի Մշակույթ, հանգիստ և կրոն բաժնից:

Հատկապես խոշոր թերակատարում է արձանագրվել Տնտեսական հարաբերություններ բաժնում՝ 66.5% (պլանավորված 192.8 մլրդ դրամից ծախսվել է ընդամենը 128.3 մլրդ դրամ): Այս բաժնի թերակատարման զգալի մասը պայմանավորված է ճանապարհային տրանսպորտ դասի ծախսերի թերակատարմամբ (կատարողականը՝ 45.5%): Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժինը կատարվել է 88.9%-ով, առողջապահությունը՝ 89.6%-ով:


Բյուջետային ծախսերի խոշոր թերակատարում է արձանագրվել հատկապես ճանապարհային տրանսպորտ դասի ծախսերի ուղղությամբ (37.5 մլրդ դրամ)

Վերը նշված թերակատարումները հանգեցրեցին բյուջեի պլանային և փաստացի ծախսերի կառուցվածքի որոշակի տարբերությունների: Այսպես, պլանավորվածից մեծ տեսակարար կշիռ են ունեցել հատկապես պաշտպանության, հասարակական կարգի պաշտպանության և սոցիալական պաշտպանության ծախսերը, իսկ պլանավորված ցածր տեսակարար կշիռ ունեցել են տնտեսական հարաբերություններ, հանրային ծառայություններ և այլն:

2013թ. 2008թ. համեմատ պետական բյուջեի ծախսային կառուցվածքում ավելացել են ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների, պաշտպանության, հասարակական կարգի ծախսերը: Շարունակում են նվազել կրթության և առողջապահության ծախսերի տեսակարար կշիռը:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %

Բյուջեի կառուցվածում շարունակում են նվազել կրթության և առողջապահության ծախսերի տեսակարար կշիռը



- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ
- Պաշտպանություն
- Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն
- Տնտեսական հարաբերություններ
- Առողջապահություն
- Կրթություն
- Սոցիալական պաշտպանություն
- Այլ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ, ՄԻԼԻՈՆ ԱՄՆ ԴՈՒԱՐ

	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Պետական պարտք	1696.8	1906.0	3375.3	3805.1	4134.7	4372.1	4588.5
Արտաքին	1448.9	1577.2	2966.9	3300.5	3569.3	3739.1	3903.8
Ներքին	247.9	328.8	408.5	504.6	565.4	633.0	684.7


ՀՀ պետական պարտքի 2009թ. կտրուկ աճը նախորդ տարվա համեմատ (77.0%-ով) հանգեցրեց պետական պարք/ՀՆԱ ցուցանիշի աճի 2.4 անգամ: 2013թ. 2009թ.-ի համեմատ այն աճեց ևս 5.1 տոկոսային կետով:

Պետական պարտքի կառուցվածքում էական փոփոխություններ չեն արձանագրվել: Պետական պարտքի շուրջ 85% կազմել է արտաքին պետական պարտքը, իսկ 15%՝ ներքինը:

Պետական պարտքի կառուցվածքում ներքին պետական պարտքի ամենամեծ տեսակարար կշիռն արձանագրվել է 2008թ. (17.3%), իսկ ամենափոքրը՝ 2009թ. (12.1%):


Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2008թ. համեմատ աճել է 2.7 անգամ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ/ՀՆԱ, %



8. ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԿԵՐԻ ՄՆԱՑՈՐԴ ՀՆԱ ՆԿԱՏՄԱՄԲ, %




Վարկերի մնացորդ/ՀՆԱ ցուցանիշը 2007թ. համեմատ աճել է 3 անգամ

Նախորդ տարիների համեմատ վարկերի մնացորդ/ՀՆԱ ցուցանիշի աճի տեմպը դանդաղել է. նախորդ տարվա 6.2 տոկոսային կետի փոխարեն այն աճել է 1.5 տոկոսային կետով:

Ինչպես և նախորդ տարիներին (2009թ. սկսած) առևտրային բանկերի կողմից տրվող վարկերի ծավալի մեջ գերակշռել են արտարժույթով տրվող վարկերը: 2013թ. դրանց տեսակարար կշիռը կազմել է 62.6%:

Ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդի ծավալում են գերակշռել արտարժույթով վարկերը


ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՐԿԵՐԻ ՄՆԱՑՈՐԴ ԾԱՎԱԼ, Ժ/Շ ՎԵՐՋ, ՄԼՐԴ ԴՐԱՄ



ՀՀ առևտրային բանկերում վարկերի մնացորդը հիմնական մասը բաժին է ընկնում ՀՀ ռեզիդենտներին: 2013թ. ռեզիդենտների վարկերի մնացորդի տեսակարար կշիռը կազմել է 97.0%: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն աճել է 11.8%-ով, իսկ ոչ ռեզիդենտներին՝ 19.0%-ով:

Վարկերի մնացորդի կառուցվածքում ընդամենը 3.0%-ն է բաժին ընկնում ոչ ռեզիդենտներին

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻՆ ԵՎ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՄՆԱՑՈՐԴ, ՄԼՐԴ ԴՐԱՄ




2013թ. վառարացել է վարկերի ճյուղային կառուցվածքը. նվազել է արդյունաբերության վարկի մնացորդը 3.0, առևտրինը՝ 0.3, իսկ ծառայություններինը՝ 0.2 տոկոսային կետով: 2.2 տոկոսային կետով աճել է սպառողական վարկերի տեսակարար կշիռը:

Նախորդ տարվա համեմատ նվազել է արդյունաբերության վարկի մնացորդը (2.3%-ով), աճել է սպառողական վարկերի մնացորդը (23.7%-ով): Սպառողական վարկերի նման արագ աճն այս իրավիճակում հիմնականում պայմանավորված է բնակչության պահանջմունքների բավարարման համար դրամական եկամուտների անբավարար մակարդակով: Դրական կարելի է համարել հիպոթեքային վարկերի մնացորդի աճը 12.4%-ով:

Սպառողական վարկերի մնացորդը աճել է 23.7%-ով, իսկ արդյունաբերության վարկավորումը նվազել է 2.3%-ով


ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐՆ ԸՍՏ ՃՅՈՒՂԵՐԻ, %



Ռեզիդանտներին տրամադրցող վարկերի կառուցվածքում 3.1 տոկոսային կետով նվազել է կազմակերպություններին տրամադրվող վարկերի մնացորդը և 2.3 տոկոսային կետով աճել է տնային տնտեսություններին տրամադրվողը:

Տնային տնտեսություններին տրամադրվող վարկերի մնացորդի աճի տեմպը գերազանցում է ձեռնարկություններինը

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ, %




Վերջին երեք տարիների ընթացքում 1 տարուց ավելի դրամով վարկերի տոկոսադրույքը աճել է 2.1 տոկոսային կետով (18.3%), դոլարով վարկերինը նվազել է 1.7 տոկոսային կետով (11.8%), իսկ մինչև 1 տարի դրամով և դոլարով վարկերի տոկոսադրույքները նվազել են 3.2 (15.0%) և 1.5 (10.2%) տոկոսային կետով համապատասխանաբար: Վերագինանսավորման տոկոսադրույքը 2013թ. դեկտեմբերին կազմել է 7.75% 2011թ. հունվարի 8.5%-ի դիմաց:

Վարկերի բարձր տոկոսադրույքները շարունակում են զսպել տնտեսական ակտիվությունը և ներդրումների աճը

Չնայած որոշակի նվազումների՝ վարկերի տոկոսադրույքները, հատկապես 1 տարուց ավելի վարկերինը, շարունակում են մնալ բարձր, ինչը լուրջ դժվարություններ է ստեղծում տնտեսական ակտիվության և ներդրումների ավելացման համար:

ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՄՆԱՅՈՐԴ ԵՎ



9. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԳՆԵՐ


ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ, %



Աղքատության մակարդակի նվազումը չի ուղեկցվել եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության կրճատմամբ

2012թ., չնայած աղքատության գծերի աճին, նվազել են աղքատության բոլոր տեսակները: Սակայն աղքատության մակարդակի նվազումը չի ուղեկցվել եկամուտների և ծախսերի բաշխման անհավասարության կրճատմամբ:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳԾԵՐ, ՀԱՋԱՐ ՀՀ ԴՐԱՄ



Բնակչության բևեռացումն առավել խորն է ըստ եկամուտների, քան ըստ սպառման

2008թ. սկսած Ջինիի գործակցով գնահատված անհավասարության ցուցանիշները (ինչպես եկամուտների, այնպես էլ սպառման անհավասարությունը) շարունակում է խորանալ, ընդ որում Հայաստանում բնակչության բևեռացումն առավել խորն է ըստ եկամուտների, քան ըստ սպառման:


2012թ. տնային տնտեսությունների ամենահարուստ 10%-ի եկամուտներն ու սպառումը գերազանցել են ամենաաղքատ 10%-ինը համապատասխանաբար 15.9 (2011թ. 14.8) և 8.2 (2011թ. 8.5) անգամ:

ՋԻՆԻ ԳՈՐԾԱԿԻՑ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	2007	2008	2009	2010	2011	2012
Ջինիի գործակից (ըստ եկամուտների)	0.371	0.339	0.355	0.362	0.371	0.372
Ջինիի գործակից (ըստ սպառման)	0.288	0.242	0.257	0.265	0.267	0.269
Աղքատության խորություն, %	4.9	5.1	7.8	8.1	7.9	5.6
Աղքատության սրություն, %	1.5	1.4	2.4	2.5	2.4	1.6

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԶԱՄԲՅՈՒՂՆԵՐ, ԸՆԹԱՑԻԿ ԳՆԵՐՈՎ, ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ

2013թ. նվազագույն աշխատավարձը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը 1.4 անգամ և 1.3 անգամ զիջում է նվազագույն սպառողական զամբյուղին




2008թ.-ից սկսած նվազագույն աշխատավարձը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը: 2013թ. նվազագույն աշխատավարձը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը 1.4 անգամ և 1.3 անգամ զիջում է նվազագույն սպառողական զամբյուղին:

Միջին ամսական անվանական աշխատավարձն 2012թ. համեմատ աճել է 4.8%-ով, ընդ որում պետական հատվածինը՝ 3.2%-ով (120.6 հազար դրամ), ոչ պետականը՝ 7.2%-ով (185.6 հազար դրամ), ըստ էության, հաշվի առնելով սպառողական գների աճը, իրական աշխատավարձն աճել է միայն ոչ պետական հատվածում:

Միայն 7 գործունեության տեսակներում աշխատավարձը գերազանցում է միջին մակարդակը: Ամենաբարձ աշխատավարձն արձանագրվել է Ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում՝ 372.1 հազար դրամ, այն բարձր է միջինից 2.5 անգամ: Ամենացածր աշխատավարձը մշակույթ, զվարճություններ և հանգիստ ոլորտում է, այն կազմում է 87.2 հազար դրամ, այն ցածր է միջինից 1.7 անգամ և ամենաբարձր աշխատավարձից՝ 4.3 անգամ:


2013թ. սպառողական գների աճը գերազանցել է միջին ամսական անվանական աշխատավարձի աճը

ՄԻՋԻՆ ԱՄՍԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, 2013Թ., ՀԱԶԱՐ ԴՐԱՄ



- A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
- B. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
- C. Մշակող արդյունաբերություն
- D. Էլեկտրականության, գազի, ջրորոշու և լավորակ օդի մատակարարում
- E. Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
- F. Շինարարություն
- G. Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում
- H. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
- I. Կացության և հանրային սենդի կազմակերպում
- J. Տեղեկատվություն և կապ
- K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն
- L. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն
- M. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն
- N. Վարչարարական և օժանդակ գործունեություն
- O. Պետական կառ. և պաշտ., պարտադիր սոցիալական ապահովագրություն
- P. Կրթություն
- Q. Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում
- R. Մշակույթ, զվարճություններ և հանգիստ
- S. Սպասարկման այլ ծառայություններ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՈՉ ԱՌԵՎՏՐՈՒՄՆԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ, ՄԼՆ ԱՄՆ



Նախորդ տարվա համեմատ զուտ ներհոսքն աճել է 10.8%-ով

2013թ. սպառողական գների ինդեքսը 0.3 տոկոսային կետով գերազանցել է 4.0±1.5 թիրախավորված

Ֆիզիկական անձանց կողմից ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները ՀՀ-ում կազմում են բնակչության եկամուտների կարևոր բաղադրիչներից մեկը:

Ֆիզիկական անձանց կողմից ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումների ներհոսք-արտահոսք հարաբերակցությունը 2013թ. կազմել է 5.8 անգամ 2007թ. 5-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ զուտ ներհոսքն աճել է 10.8%-ով:

Զուտ փոխանցումների 92.3%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, խոշոր գործընկերներից դրական հաշվեկշիռ առկա է նաև ԱՄՆ-ի, Ղազախստանի հետ, բացասական հաշվեկշիռ առկա է Զինաստանի, Թուրքիայի և ԱՄԷ-ի հետ:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍ. %

	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Սպառողական գների ինդեքս	104.4	109.0	103.4	108.2	107.7	102.6	105.8
Պարենային ապրանքների ԳԻ	106.0	110.0	99.3	108.6	111.2	102.3	105.8
Ոչ պարենային ապրանքների ԳԻ	99.5	105.1	104.7	109.6	103.4	104.6	104.6
Ծառայությունների ԳԻ	104.2	109.0	110.4	106.8	103.6	102.1	106.4


ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ, %

	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Արդյունաբերողների արտ. ԳԻ	100.6	102.2	107.1	122.6	109.1	107.0	104.7
Գյուղմթերք արտ. իրացման ԳԻ	96.6	114.1	94.0	137.4	107.5	95.0	99.0
Արտահանման միջին ԳԻ	99.4	99.6	91.4	119.0	111.5	98.3	99.7
Ներմուծման միջին ԳԻ	101.2	108.8	117.1	102.0	108.6	108.6	103.2

2013թ. սպառողական գների ինդեքսը 0.3 տոկոսային կետով գերազանցել է 4.0±1.5 թիրախավորված միջակայքը: Ի տարբերություն նախորդ երեք տարիների, 2013թ. ամենաարագ աճը ցուցաբերել է ծառայությունների գները: Շարունակում են նվազել գյուղմթերքների և արտահանման գները:


10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԱՊՇ ԵՎ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ԳԼՈՐԱԼ ՄՐՅՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ 2013-2014 /148 ԵՐԿԻՐ/ ՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՎԱԾՈՒԹՅՈՒՆ 2014 /148 ԵՐԿԻՐ/



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ 2014 /186 ԵՐԿԻՐ/

ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼԸ 2014 /189 ԵՐԿԻՐ/



ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ 2013 /187 ԵՐԿԻՐ/

ԿՈՈՒԴՊՅԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՀԱՄԱԹԻՎ 2014 /177 ԵՐԿԻՐ/

